Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 702 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-136-Ա որոշման

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Դիլիջան համայնքում Հայ առաքելական եկեղեցական համալիրի կառուցում, որը կնպաստի համայնքում հոգևոր-մշակութային կյանքի բարելավմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Ռուբեն Վարդանյան և Վերոնիկա Զոնաբենդ, ՌՎՎԶ հիմնադրամ, Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամ, Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ բարեգործական հիմնադրամ (նախկին անվանումը՝ Զբոսաշրջության և Քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ), ԱյԴիԱ բարեգործական հիմնադրամ, Մաքսիմ Աթայանց, այլ նվիրատուներ և բարերարներ, ֆիզիկական անձինք (ներառյալ՝ առանձին բարերարներ), հայկական և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններ, այդ թվում՝ հասարակական կազմակերպություններ և հիմնադրամներ:

4.	Ծրագիրը կատարողը	Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամ (քաղաք Դիլիջան 3903, Գետափնյա 7, ՀՎՀՀ՝ 07618624)՝ ԱյԴիԱ բարեգործական հիմնադրամի հետ (քաղաք Երևան, Հ. Հակոբյան 3, ՀՎՀՀ՝ 00222509) համատեղ:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք, բնագավառը՝ եկեղեցաշինություն
6.	Ծրագրի բյուջեն	3,718,935,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի» կրոնական կազմակերպություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2017 թվական մարտի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Եկեղեցական համալիրի կառուցման նախագծային, նախապատրաստական և հիմնային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2017 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 30-ը՝ 1,938,935,000 դրամ. 2) Եկեղեցական համալիրի կառուցում: Նախատեսվում է իրականացնել 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 1,382,000,000 դրամ. 3) Եկեղեցական համալիրի ներքին հարդարում և տարածքի բարեկարգում: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2028 դեկտեմբերի 31-ը՝ 398,000,000 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Եկեղեցական համալիրի կառուցման նախագծային, նախապատրաստական և հիմնային աշխատանքների իրականացում՝ 1,938,935,000 դրամ (2025 թվականի հոկտեմբերի 7-ի դրությամբ փաստացի կատարված է 655,838,000 դրամի չափով). 2) Եկեղեցական համալիրի կառուցման, ներքին հարդարման և տարածքի բարեկարգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 806,000,000 դրամ (2025 թվականի հոկտեմբերի 7-ի դրությամբ փաստացի կատարված է 575,237,000 դրամի չափով).

		3) Շինարարական նյութերի և ապրանքների ներմուծում՝ 150,000,000 դրամ (2025 թվականի հոկտեմբերի 7-ի դրությամբ փաստացի ծախսեր կատարված չեն). 4) Շինարարական նյութերի և ապրանքների ձեռքբերում ներքին շուկայից՝ 710,000,000 դրամ (2025 թվականի հոկտեմբերի 7-ի փաստացի կատարված է 232,898,000 դրամի չափով). 5) Կազմակերպչական ծառայություններ՝ 114,000,000 դրամ (2025 թվականի հոկտեմբերի 7-ի դրությամբ փաստացի կատարված է 42,300,000 դրամի չափով):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) Գրասենյակի վարձակալության և կոմունալ ծախսեր՝ 10,000,000 դրամ. 2) Հիմնադրամի աշխատակիցների աշխատավարձ և գործուղման ծախսեր՝ 20,000,000 դրամ. 3) Խորհրդատվական ծառայությունների ծախսեր (հաշվապահական և աուդիտորական ծառայություններ)՝ 30,000,000 դրամ. 4) Բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսեր՝ 54,000,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան և Դիլիջանի քաղաքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ընտրությամբ անկախ աուդիտորի ներգրավում և ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ